

24.05.2016

1. **Հոդված 372, 373** Առաջարկում ենք հսկիչ գների փոխարեն, որպես հիմք ընդունել Եվրոպական երկրներում դուրս գրված հաշիվ-ապրանքագրերը: Որպես փորձնական տեստավորում առաջարկում ենք սկսել Գերմանիա, Ավստրիա և Մեծ Բրիտանիայից ներմուծված ապրանքներից: Առաջարկում ենք նաև ստեղծել համապատասխան համակարգ, որը թույլ կտա արագ կերպով ստուգել ինվոյսի իսկությունը Եվրոպական առևտրային պալատների կամ այլ համապատասխան կառույցների միջոցով: Եվրոպական Բիզնես Միությունը կաջակցի վերոնշյալ պալատների հետ կապերի հաստատմանը և համապատասխան համակարգի մշակման գործընթացում:
2. Առաջարկում ենք շահաբաժինների գծով չկիրառել նախատեսվող խտրականություն տեղական և օտարերկրյա ֆիզիկական անձ ներդրողների միջև՝ տեղական ներդրողների համար սահմանելով շահաբաժնի հարկման 5%-անոց, իսկ օտարերկրացիների համար՝ 10%-անոց դրույքաչափ, որը միանգամայն հակասում է ներդրումների համար գրավիչ երկիր դառնալու սկզբունքին:
3. Համահարթեցնել ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ընկերությունների կողմից հարկային վնասի տեղափոխման համակարգը՝ ոչ ռեզիդենտներին ևս հնարավորություն ընձեռելով տեղափոխելու հարկային վնասը,
4. Հայաստանի Հանրապետության Հարկային օրենսգրքի Ընդհանուր մասի Բաժին 3-ի Գլուխ 10-ի Հոդված 55-ը լրացնել հետևյալ բովանադակությամբ նոր՝ 8.1. մասով. .8.1.Եթե ծախսագրման և/կամ ավելացված արժեքի հարկի հաշվանցի համար հիմք հանդիսացող գործարքն իրականում տեղի է ունեցել և գործարքն իրականացնող կողմերի միջև առկա է գրավոր պայմանագիր, որտեղ նշված են հաշվարկային փաստաթղթում բացակայող բոլոր տվյալները և հաշվարկային փաստաթղթում հղում է կատարված այդ պայմանագրին, սակայն այդ գործարքի մասով դուրս գրվող սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված հաշվարկային փաստաթղթերում բացակայում են սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված որոշ վավերապայմաններ, ապա հաշվարկային փաստաթուղթը համարվում է սույն

հողվածով սահմանված պահանջներին բավարարող:

5. Հարկային արտոնությունների տնտեսական արդյունավետության բարձրացման նպատակով վերաձևակերպել մարդասիրական ծրագրերի իրագործման շրջանակում անուղղակի հարկերից ազատման կառուցակարգը՝ թույլ տալով հաշվանցելու այդ նպատակով մատակարարումների գծով ձեռքբերումների մասով դեբետագրված անուղղակի հարկերը,
6. Օտարերկրյա ներդրումների խթանման նպատակով առաջարկվում է նաև՝
 - Շահութահարկից ազատել կապիտալի հավելանք.
 - Հայաստանում ներդրումներ կատարելու դեպքում համաշխարհային հայտնի ընկերություններին (հիմք ընդունելով տվյալ տարվա սկզբի դրությամբ Fortune 500-ի ցանկում ընգրկված լինելու հանգամանքը) ազատել շահութահարկից 5 տարի ժամկետով.
 - Իսկ ենթակառուցվածքների զարգացման նպատակով շահութահարկի արտոնություններ սահմանել **կառավարության հավանությանը արժանացած** ոլորտներում շահութահարկի գումարի և վնասի տեղափոխման ժամկետների մասով երկարացնելով այն մինչև 8 տարի,
Զուգահեռ կատարել կապիտալի արհեստականորեն դուրս բերման ու վերադարձի վերահսկողության խստացումը:
7. Անցում կատարել ուղղակի հարկերի կանխավճարների հաշվառման և գանձման այլընտրանքային կառուցակարգին՝ հիմնված շահույթի փաստացի մակարդակի վրա,
8. Պարզեցնել կրկնակի հարկման բացառման նպատակով ՀՀ-ի համար համաձայնագրի կողմ հանդիսացող պետությունների կազմակերպությունների ռեզիդենտության հիմնավորման փաստաթղթավորման ընթացակարգը,
9. Վերաձևակերպել ,Հարկերի մասին ՀՀ օրենքի 24-25 հոդվածներով սահմանված պատժամիջոցների մեխանիզմը՝ բացառելով հարկի գումարի վճարված լինելու պարագայում լրացուցիչ պատասխանատվության միջոցները,
10. Կառուցվածքային փոփոխություն իրականացնել գանգատարկման հանձնաժողովի կամ խորհրդի կազմում. անդամներ ներգրավել ոչ հարկային համակարգից, մասնավորապես

շահագրգիռ հասարակական կազմակերպություններից և միջազգային հեղինակավոր մասնագիտական ընկերություններից, բացառել վիճարկման առարկա վարչական ակտի կազմմանը ուղղակի կամ միջնորդավորված կերպով մասնակից հարկային ծառայողների մասնակցությունը հանձնաժողովի կամ խորհրդի կողմից որոշումների ընդունման գործընթացում,

11. Հարկ վճարողի՝ հարկային օրենսդրության պահպանմանն ուղղված առաջնային նվազագույն պահանջների իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով ընկերություն գրանցելիս կամ անհատ ձեռնարկատեր հաշվառվելիս տեղեկատվական թերթիկի միջոցով իրազեկել և հայտարարության ձևաչափով ներկայացվող փաստաթղթով տնտեսավարողի ստորագրությամբ հավաստում ստանալ այդ պահանջների մասին վերջիններիս տեղեկացվածության մասին,
12. Առաջարկում ենք հարկային օրենսդրության փոփոխությունների կատարել առավելագույնը տարին մեկ անգամ: Դա կնպաստի բիսնեսների կողմից վստահության մակարդակի աճին և կնվազեցնի հաճախակի փոփոխվող օրենքների հետ կապված անհարմարավետությունը և իրազեկվածության պակասը:
13. Առաջարկում ենք չվերացնել հարկային արտոնություններ կրթության և առողջապահության ոլորտներում: Այստեղ կարևոր է նաև միջազգային փորձի ուսումնասիրումը և ադապտացված (հարմարեցված) տարբերակի կիրառումը, բացառելով “copy-paste” տարբերակը:
14. Առաջարկում ենք անփոփոխ թողնել 40 մլն. շեմը՝ պահպանելով ներկայիս 115 մլն. ՀՀ դրամը: Մեկ տարին շատ քիչ ժամկետ է դրական փոփոխություններն արձանագրելու համար, առաջարկում ենք թողնել շեմը անփոփոխ առնվազն 5 տարվա ընթացքում:
15. Հոդված 134: Պարզաբանման և հստակեցման կարիք ունի Հոդված 134-ում արտացոլված Մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի շահութահարկի հաշվարկման և վճարման առանձնահատկությունների կոնցեպտը: Հաշվի առնելով տվյալ հարցի

կարևորությունը օտարերկրյա ներդրումների ներգրավման տեսանկյունից, առաջարկվում է այն քննարկել Օրենսգրքի նախագծի Ընդհանուր մասի քննարկման շրջանակներում:

16. Առաջարկվում է ներդնել ընտանեկան եկամուտների հարկման համակարգ:

Առաջարկում ենք նաև կիրառել եկամտային հարկի նվազեցումների համակարգ (Tax credits):

17. Հոդված 41 Առաջարկում ենք հստակեցնել նշյալ հոդվածը, քանի որ գործարքի վերաձևակերպում, հետևաբար հանդիպակաց մատակարարումն դրույթը հստակ չի նկարագրում հետագա հարկային հաշվարկների ճշգրտումներում ապրանքի մասնակի կամ ամբողջական հանդիպակաց մատակարարման դեպքերում, կրկնակի հարկման բացառումը:

18. Հոդված 42, մաս 1-ին

Առաջարկում ենք ,10 թույլենքիե բառերը փոխարինել ,60 թույլենքիե բառերով, քանի որ գործնականում կիրառելի չէ նման կարճ ժամանակահատվածը և այն լուրջ խնդիրներ կստեղծի տնտեսավարողների համար:

19. Առաջարկում ենք ԱԱՀ-ից ազատել ֆինանսական վարձակալության գործարքը արտադրող կազմակերպությունների համար ինչպես նաև կիրառել արագացված ամորտիզացիայի սկզբունքը: Նախադեպը հաջողությամբ կիրառվում է մի շարք երկրներում, մասնավորապես Ավստրիա, Անգլիա, Ռուսաստան, Բելարուս, Չեխիա, ԱՄՆ, Ադրբեջան:

Մաքսային Օրենսդրությանը վերաբերող առաջարկներ.

20. Առաջարկում ենք երկակի նշանակության ապրանքների համար եզրակացություն տրամադրելու համար օրերի քանակը կրճատել, սահմանելով այն 3-5 աշխատանքային օր, իսկ դրա համար նախատեսվող գանձումները դարձնել 50 ԱՄՆ դոլար:
21. Ներմուծողների համար ստեղծել համապատասխան պայմաններ բեռնափոխադրող ավտոմեքենաների տարբեր կցորդներով մուտք և ելք իրականացնելու համար:
22. Եվրո ստանդարտներով բեռնափոխադրող մեքենաների համար սահմանել արտոնյալ բնապահպանական վճարներ/գանձումներ:
23. Նույն ապրանքատեսակներ նույն մատակարարներից ներմուծելու դեպքում պահանջել որակի սերտիֆիկան գոնե տարին մեկ անգամ այլ ոչ թե յուրաքանչյուր ներմուծման ընթացքում:
24. Հստակեցնել և պարզեցնել երկակի նշանակություն ունեցող ապրանքների մաքսազերծման գործընթացները, հրապարակել երկակի նշանակություն ունեցող ապրանքների ցուցակը:
25. Ներքին արտադրությունը խթանելու նպատակով առաջարկում ենք ռազմավարական նշանակություն ունեցող ապրանքների արտադրության համար հուլիսի ներմուծման արտոնություններ սահմանել: